Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. սեպտեմբերի 8-ից 14-ը ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նարինե Հարությունյան - Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, սեպտեմբերի 8-ից 14-ը

3. Հրավիրող կողմը՝

BMF/JVI/IMF (Ավստրիայի ֆինանսների նախարարություն, Արժույթի միջազգային հիմնադրամ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2024 թվականի սեպտեմբերի 8-ից 14-ն ընկած ժամանակահատվածում Ավստրիայի ֆինանսների նախարարության, Արժույթի միջազգային հիմնադրամի և Վիեննայի միավորված համալսարանի (JVI) կողմից կազմակերպվել է «Հարկման ապագան (Future of Taxation)» թեմայով դասընթաց, որին իրեն մասնակցությունն են ունեցել Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղրղզստանի, Ալբանիայի, Թուրքիայի, Թուրքմենստանի և մի քանի այլ երկրների ներկայացուցիչներ:

Դասընթացի նպատակն էր մասնակիցներին ներկայացնել Ավստրիայի հարկային համակարգը, հարկային համակարգը ԵՄ երկրներում, ժամանակակից հարկային մարմինների կառավարման սկզբունքները, տրանսֆերտային գնագոյացման հետ կապված հարցեր, քննարկել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել թվայնացումը հարկային մարմինների վրա, ինչպես նաև ներկայացնել այնպիսի գործիքներ, ինչպիսիք են ISORA (հարկային մարմինների միջազգային հարցում) տեղեկատվական հարթակը և TADAT (հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիք) գործիքը:

Մասնակից մի քանի երկրներ ներկայացրել են իրենց երկրում վերջին ժամանակահատվածում իրականացված հարկային բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվություն՝ սահիկաշարի միջոցով:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Հարկման նոր աշխարհը,
- Ավստրիայի հարկային համակարգը,
- Հարկային համակարգը ԵՄ երկրներում,
- Ժամանակակից հարկային մարմինների կառավարման սկզբունքները,
- Հարկումը և տնտեսական աճը,
- Վստահություն և հարկային կարգապահության կառավարում,
- Արհեստական բանականության (AI) կիրառումը հարկային մարմիններում և վերջինիս ազդեցությունը հարկ վճարողների իրավունքների վրա,
- Տրանսֆերտային գնագոյացման հետ կապված հարցեր,
- Քննարկում, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել թվայնացումը հարկային մարմինների վրա,
- Ներկայացվել են գործիքներ, ինչպիսիք են ISORA (հարկային մարմինների միջազգային հարցում) տեղեկատվական հարթակը և TADAT (հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիք)-ը,
- Այլ թեմաներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացին մասնակցել են աշխատակիցներ աշխարհի մի շարք պետությունների հարկային մարմիններից, ֆինանասների նախարարությունից և այլ պետական մարմիններից:

Դասընթացի շրջանակներում կազմակերպված քննարկումների և ինտերակտիվ խաղերի ժամանակ մեր մասնակիցը ակտիվորեն մասնակիցել է քննարկումներին, ներկայացրել է ՀՀ հարկային համակարգում կատարված և կատարվելիք մի շարք բարեփոխումներ:

Ինտերակտիվ խաղերի ընթացքում մասնակիցները բաժանվել են թիմերի, որի շրջանակներում մեր երկրի մասնակցի թիմը ճանաչվել է հաղթող և ստացել է խրախուսական մրցանակ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Դասընթացի ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Դասընթացն ամփոփվել է վերջինիս ընթացքում ներկայացված թեմաների շրջանակներում կազմված քննությամբ, որի արդյունքները սակայն չեն ներկայացվել մասնակիցներին:

Մասնակիցները միմյանց հետ փոխանակվել են իրենց տպավորություններով, քննարկել իրենց երկրներում հարկման հետ կապված մի շարք հարցեր, որոնք առաջացել են դասընթացի շրջանակներում:

Դասընթացը մասնակցին թույլ տվեց ծանոթանալ միջազգային լավագույն փորձին՝ հետագայում լավագույն օրիակները ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային գործընկերների շրջանում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նարինե Հարությունյան

25.09.2024թ